

ՄԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Սեպտեմբերի 20, 1987 – Գրքերի Աշխարհ

## ՊԱՅՔԱՐԵԼ ԱՅՆ ԱՄԵՆԻ ԴԵՄ, ԻՆՉԸ ԾՆՈՒՄ Է ՉԱՐԻՔ ԵՎ ՉԱՐԱԳՈՐԾ



«Սովետական Գրող» հրատարակչությունը լույս ընծայեց Արտաշես Քալանթարյանի «Խոստովանություն» վիպակների ժողովածուն:

Մեր աշխատակիցը խնդրեց հեղինակին պատասխանել մի քանի հարցի:

— *Եթե փորձեք հանրագումարի բերել ձեր գրական ժառանգությունը՝ որպես արդիական, հրատապ խնդիրներ արձարծող գրող, ձեզ լիովին բավարարո՞ւմ է դրանց հասարակական հնչեղությանը:*

— Իմ սերնդի պատանեկությունն անցավ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ յուրաքանչյուր ժողովի վերջում, անկախ այն բանից, թե ինչ հարցեր էին քննարկվում, ելույթ ունեցողներից ամեն մեկը պարտավոր էր բացականչել. «Կեցցե ժողովուրդների հանճարեղ առաջնորդ, անգուգական գորավար, գիտության կորիֆեյ հայր Ստալինը»:

Եվ գրողներն էլ իրենց հերթին ճիշտ այդպես էլ գրում էին՝ վերջում կեցցեներ հոչակելով առաջնորդին ու մեր երջանիկ կյանքին, մեծ վերափոխումներին և դրական կերպարներին: Ըստ որում դրական այդ կերպարներն անթերի պետք է լինեին: Նրանք իրավունք չունեին սխալվելու, իրենց կնոջից բացի ուրիշ կին սիրահետելու, հուսահատվելու, պարտվելու, ինքնասպան լինելու: Նրանք պարտավոր էին օրինակ ծառայել ու հաղթել: Միայն հաղթել:

Այդ մտայնությունը դեռ երկար ժամանակ իշխում էր նույնիսկ «կորիֆեյի» վախճանից շատ անց և չեմ կարող վստահ ասել, թե հիմա իսպառ վերացել է այդ ժամանակներին վկա մարդկանց ուղեղներից: Իմ «Մարաթոն» վեպը ընթերցելուց հետո մեր տարեց գրողներից մեկն ասաց.

— Ափսո՛ս, քո գործն առաջ չի գնա, որովհետև հերոսդ փաստորեն չի հաղթում:

Հիմա, երբ ինչպես դուք եք հուշում՝ հանրագումարի եմ բերում իմ «գրական ժառանգությունը», տեսնում եմ, որ իմ հերոսներից ոչ մեկը ընդհանրապես ոչ մի երկում փաստորեն չի հաղթում: Ոչ մեկը: Գուցե պատճառն այն է, որ ես կյանքում, իմ շրջապատում երբևէ չեմ տեսել, որ կարգին մարդը հաղթի: Գուցե պատճառն այն է, որ ես մի առանձին համակրանք չունեմ այդ այսպես կոչված հաղթողների նկատմամբ: Որովհետև, եթե պատերազմ չկա ու հայրենիքը վտանգի մեջ չէ, հաղթանակը, միևնույն է, արյունով է ձեռք բերվում: Իսկ ես դեմ եմ խաղաղ օրերին թափված արյանը: Իմ կարեկցանքը նրանց կողմն է, ովքեր իրենց արդար հացն են վաստակում և միայն հացով չեն ապրում: Ովքեր չեն կարող անտարբեր անցնել ուրիշի ցավի արցունքի կողքով, չեն կարող տանել անարդարությունը: Եվ կովում են: Բայց այդ կոնվը ոչ թե ինչ-որ որոշումների կատարումն ապահովելու համար է, ոչ թե հանուն հերոսության ու հաղթանակի, այլ որովհետև ուրիշ տեսակ չեն կարող լինել: Եվ

ավելի հաճախ ծիծաղելի վիճակների մեջ են ընկնում, ծեծված են դուրս գալիս կռիվներից, պարտվում են: Բայց, միևնույն է, դեռ սպիները չապաքինված՝ մղվում են դեպի կռիվ, որովհետև նրանց պայքարը ոչ թե կոնկրետ չարագործների դեմ է, այլ այն ամենի դեմ, ինչը չարիք է ծնում և չարագործ:

Ահա հենց այդ առումով էլ ինձ բավարարում է այդ գործերի հասարակական հնչեղությունը:

Ես չէի ցանկանա այսօրվա հայացքով նայելով որևէ բան փոխել կամ ավելացնել այդ գործերի մեջ: Դա ճիշտ ու ազնիվ չէր լինի ժամանակի նկատմամբ: Որովհետև յուրաքանչյուր գործ իր ժամանակն է ճշտում և ընդգծում: Լավ թե վատ: Հետին թվով սրբագրելն ու խմբագրելը կհանգեցնեին կեղծիքի:

Այսօրվա հայացքով կարելի է այսօրվա կյանքին նայել և հառաչելով ուրախանալ, որ ի վերջո բախտ ունեցանք հասնել այս օրվան: Եվ կարելի է գրել այսօրվա մասին՝ համարձակ, անկեղծ ու հպարտ, գրել ճշմարիտը, առանց «ստալինյան» վերջաբանների, առանց անարյուն ու սուտ դրական կերպարների, առանց ջանք ու ճիգ թափելու գոնե տողատակով, այլաբանորեն ինչ-որ բան ասել, խորը թաքցրած ճշմարտության մի հատիկ, որ հաճախ ոչ ոք էլ չէր նկատում: Իսկ երբեմն էլ «ծիտիկի» նման վերածվում էր զավեշտի: Համալսարանի մեր դասախոսներից մեկը ամենայն լրջությամբ համոզում էր մեզ, թե երբ Աղայանը գրում էր «Ծիտը ծառին ծվլում է՝ ծիվ, ծիվ, ծիվ», դրանով նա ցարական դաժան գրաքննչության պայմաններում, գաղտագողի ողջունում էր հեղափոխության ծնունդը:

Թե մեր այդ դասախոսն ինչպես էր գլխի ընկել, մինչև հիմա էլ գաղտնիք է ինձ համար:

— *Մարդու հոգեկան կատարելագործման համար ձեր կարծիքով ավելի շատ սոցիալական, թե՛ բարոյական խթան է հարկավոր: Մեր գրականության մեջ, արդյոք, չի՞ «թերակշռում» առաջինը, որն էլ թուլացնում է երկի հասարակական հնչեղությունը:*

— Երևի սա ավելի շատ գրականության տեսաբանին արժանի հարց է: Իմ կարծիքով մարդու հոգեկան կատարելագործման համար հավասարապես կարևոր են և՛ սոցիալական, և՛ բարոյական խթանները: Առանց չափ ու կշեռքի: Իսկ եթե ավելի անկեղծ լինեմ, որի հնարավորությունը, փառք աստծո, այսօր ունենք, ապա կասեմ, որ մարդու հոգեկան կատարելագործման համար ոչ մի հատուկ խթան էլ պետք չէ: Եթե գրականությունը կյանքի գեղարվեստական արտացոլումն է, էլ ի՞նչ խթաններ: Չէ՞ որ կյանքը իր մեջ կրում է ամեն ինչ: Ուրեմն մի թե գրողը որևէ երկ ստեղծելիս, պետք է մտածի խոհարարի նման, եկ մի քիչ սոցիալական խթաններ լցնենք կաթսայի մեջ, մի քիչ էլ բարոյական: Չէ՛, բարոյականը շատ եղավ, սոցիալականը ավելացնենք, որպեսզի հանկարծ «թերակշռում» չստացվի և կանգ չառնի մարդու հոգեկան կատարելագործման պրոցեսը:

Իմ կարծիքով սա միամիտ մոտեցում է:

— *Ձեր կարծիքով մարդկային ոգին դարեր ի վեր կրե՞լ է որակական փոփոխություն: Խոսքը կատարելագործման մասին չէ:*

— Այո, կրել է: Եվ դրա հանճարեղ ձևակերպումը Թումանյանն է տվել ընդամենը մի քառյակում.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան  
 Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան:  
 Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,  
 Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Պարզվեց, որ շատ ու շատ ավելի հեշտ է հեռուստացույց և խոսող մեքենաներ ստեղծելը, երկնաքերներ բարձրացնելը, տիեզերք թռչելն ու նույնիսկ զբոսանքը լուսնի վրա, քան թե մի փոքր, մի քիչ փոխելը մարդու հոգին: Մարդասպանների զենքն է արագորեն փոխվում և կատարելագործվում: Դանակի փոխարեն նրանց ձեռքին հիմա նեյտրոնային ռումբերի գլխիկներ կրող հեռահար հրթիռների արձակման կոճակներ են: Մի քանի վայրկյանում նրանք կարող են պայթեցնել ամբողջ երկրագունդն հանուն նախնադարյան մարդու նույն վայրենի բնագոյների ուրիշների ունեցվածքին տիրելու, ուրիշներից վեր զգալու, ուրիշների ուղեղներին իշխելու մոլուցքի:

Մարդու հոգում ի՞նչն է փոխվել, եթե Հոմերոսի, Մոֆոկլեսի, Խորենացու գործերը հիմա էլ այժմեական են հնչում: Մարդկային հարաբերությունները այնքան, կամ գրեթե այնքան նույնն են մնացել, որ հաճախ զարմանում ես, թե ինչու այդ գործերի հերոսները հեռախոսից կամ հեռագրից օգտվելու փոխարեն սուրհանդակ են ուղարկում միմյանց: Մի՞ թե մարդկանց հոգուց վերացել են նախանձը, չարությունը, ընչաքաղցությունը, նենգությունը, դավաճանությունը, ստորաքարշությունը, կեղծավորությունը: Դժբախտաբար չեն վերացել: Եթե վերացած լինեին, այսօր հարկ չէր զգացվի նորանոր որոշումներ կայացնել և կրկին ու կրկին ասպարեզ հանել մարդկային հոգու կատարելագործման և վերակառուցման թեման:

Երանի թե հնարավոր լիներ որոշումներով լուծել հարցը:

— *Ո՞րն է ձեր հաջորդ գիրքը:*

— Հանկարծ հիշեցի թե մեծանուն Հրայր Բոչարն ինչպես էր շտապում տպագրված տեսնել իր «Սպիտակ գիրքը»:

Սովորաբար հանդարտ, վեհաշուք, շարժումների մեջ զուսպ գրողը, հիվանդության հետ կռվելով, հևիհև տպարան էր գնում և հրատարակչություն, մամուլ առ մամուլ վերցնում և կարդում շարվածքը: Եվ մտածեցի, որ ավա՞ղ, ինձ էլ երևի հիմա չէր խանգարի շտապելը: Այնինչ, բարեբախտաբար թե դժբախտաբար, հրատարակչներին թվում է, թե մենք անմահ ենք:

1985—86 թթ. գրեցի մի նոր վեպ, որի վերնագիրը «Քննություն» է: Այդ վեպը հրապարակախոսական բնույթ ունի և շոշափում է մեր հանրապետությունում վերակառուցման և հրապարակայնության հետ առնչվող որոշ հարցեր: Բնականաբար շտապեցի ներկայացնել «Սովետական գրող» հրատարակչություն: Ու թեև գաղտնի գրախոսության ուղարկվելուց հետո վեպը հրատարակչություն վերադարձավ բացարձակ դրական կարծիքով, սակայն ինձ ասացին, որ գիրքը կարող են լույս ընծայել միայն 1990 թվականին: Ո՞վ գիտե, եթե ամեն ինչ հաջող դասավորվի՝ գուցե 1989 թվականին: Բայց դա շատ կասկածելի է:

Ես հրատարակչությանը մագաչափի իսկ չեմ մեղադրում: Այդպիսին են հրատարակչության այսօրվա հնարավորությունները: Իմ խոսքը ուրիշ բանի մասին է:

Եթե այսօր գրողների առջև հրամայական խնդիր է դրված անհապաղ արձագանքել երկրում տեղի ունեցող հեղափոխական վիթխարի տեղաշարժերին և ստեղծել ժամանակի շունչը արտահայտող գեղարվեստական ու հրապարակախոսական գործեր, ապա հրատարակչություններին էլ հնարավորություններ պետք է տրվեն, որպեսզի նրանք կարողանան շտապ, ժամանակին լույս աշխարհի հանել, ընթերցողին տալ այդ գործերը:

Մանկամթերքի վաճառքի և օգտագործման խիստ ժամկետներ կան, որից հետո սնունդը կորցնում է իր թարմությունը և իր բարերար ազդեցությունը մարդկանց օրգանիզմի վրա:

Իմ կարծիքով նույնը որոշ չափով վերաբերում է նաև ժամանակակից հրապարակախոսական գրականություն կոչվող հոգևոր սննդին:

**Հարցազրույցը վարեց Ա. ԿՈՒԼԱՆԱԶՅԱՆԸ**